

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
Ի Ր Ա Վ Ա Բ Ա Ն Ն Ե Ր Ի Մ Ի Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 2 (64)
2014 թ.

Գլխավոր խմբագիր՝
ի.գ.թ., պրոֆ. Լևոն Օհանյան

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ

Խ մ բ ա գ Ր ա կ ա ն խ ո Ր Ի Ո Ւ Ր Պ

Սամվել Դիլբանդյան -

ի.գ.դ., գլխավոր խմբագրի տեղակալ

Դավիթ Մելքոնյան -

ի.գ.թ., պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան - ի.գ.դ.

Հարություն Խաչիկյան - ի.գ.դ.

Արմեն Հայկյանց - ի.գ.դ.

Գագիկ Համբարձումյան

Արթուր Վաղարշյան - ի.գ.դ.

Սերգեյ Առաքելյան - ի.գ.թ.

Վիգեն Քոչարյան - ի.գ.թ.

Խմբագրության հասցեն՝
ՀՀ, 0025 Երևան,
Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ
իրավագիտության ֆակուլտետ:
Հեռ. 060-71-02-47
Էլ. կայք՝ www.orenq.am

Խմբագրությունը կարող է
հրապարակել նյութեր՝ համամիտ
չլինելով հեղինակների
տեսակետներին:

12 համակարգչային էջից ավելի
չպատվիրված նյութերը չեն
ընդունվում:

e-mail: ysu@ysu.am

Դասիչ՝ 77771

Տպագրական 7 մամուլ

Գրանցման քիվը՝ 798

Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային

Հանձնված է շարվածքի

18.05.2014

Հանձնված է տպագրության

3.07.2014

СОЮЗ ЮРИСТОВ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 2 (64)
2014 г.

Главный редактор:
к.ю.н., проф. Левон Оганян

Учредитель и издатель:
Союз Юристов РА,
Юридический факультет ЕГУ

Редакционный совет

Самвел Дилбандян -

д.ю.н., зам. главного редактора

Давид Мелконян -

к.ю.н., ответственный секретарь

Геворг Даниелян - д.ю.н.

Арутюн Хачикян - д.ю.н.

Армен Айкянц - д.ю.н.

Гагик Амбарцумян

Артур Вагаршян - д.ю.н.

Сергей Аракелян - к.ю.н.

Виген Кочарян - к.ю.н.

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1, юридический
факультет ЕГУ.
Тел.: 060-71-02-47
e-mail: a_petrosyan@ysu.am
web: www.orenq.am

8 усл. печ. л.
Тираж: 500
Сдано в набор 18.05.2014
Подписано к печати 3.07.2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գազիկ Դագինյան, Տաթևիկ Սուջյան

ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ.....5

Սամվել Դիրանդյան

ՉԵՐԲԱԿԱՆԱԿԱԾ ԱՆՋԻ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԶԱՓ ՇԱՀԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ 16

Հրայր Դուկասյան, Անահիտ Հարությունյան

ՈՉ ԻՐԱՎԱԶԱՓ ՎԱՐՔԱԳԾԻ ԱՐԳԵԼՔԸ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ԼՈՒՅՄԻ
ՆԵՐՔՈ.....26

Դավիթ Ավետիսյան

ՅԻՄՆԱՎՈՐ ԿԱՍԿԱԾԸ ՈՐՊԵՍ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՈՄԱՆ
ԻՐԱՎԱԶԱՓՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆ ԸՍՏ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ
ՆԱԽԱԳԾԻ35

Վահե Ենգիբադյան

ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԸՍՏ ՀՀ
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ45

Արթուր Զախոյան

ՀԱՏՈՒԿ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....53

Դավիթ Մելքոնյան

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻ ՆՈՐ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱԿԱԿՇԻՈՒՆԵՐԸ62

Դավիթ Խաչատրյան

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹ. ԻՐԱՎԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ,
ԿԻՐԱՈՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԸ, ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ68

Արսեն ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ ԸՍՏ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ89

Գևորգ Բաղդասարյան

ԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐՆ ԸՍՏ ՀՀ
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ.....99

Արժեքն Հոյականորդայան

Նոր երեւան եկած շանգաւանքներով բանաւորի Կերանաւան Հիւքերի՝
դասակերով շանգաւան շահեւերի ՀեՏ Կաղակած Հիւանախիւրերը ՀՀ քրեական
դասակարողութան գործող օրենսգրքով եւ նոր օրենսգրքի նախագծով.... 110

Նեյի Աղաքայան

Անշաքանախի շերբակաւան եւ Կաւանակորան
Արանշանակասողութեւներն ըստ ՀՀ քրեական դասակարողութան նոր
օրենսգրքի նախագծի..... 119

Սարգսյան Հայկ

դասանաքի Կորաիք Մեղադրանքի Փոքոնան Հիւանակարգերը ըստ ՀՀ
քրեական դասակարողութան նոր օրենսգրքի նախագծի..... 130

ՁԵՐԲԱԿԱԼԱԿԱԾ ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԶԱՓ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Սամվել Դիլբանդյան

*ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի
անբիռնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Քրեադատավարական նոր օրենսդրության ընդունումը նպատակ ունի ապահովել ինչպես հանցագործությունների արդյունավետ քննությունը, այնպես էլ անձի իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Այն բխում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 2-րդ հոդվածից, ըստ որի՝ օրենսգրքի նպատակն է անձի իրավունքների և ազատությունների երաշխավորման վրա հիմնված՝ ենթադրյալ հանցանքների վերաբերյալ վարույթի իրականացման արդյունավետ կարգի սահմանումը: Արդեն բազմիցս հիմնավորվել է քրեական դատավարության նոր օրենսգիրք ունենալու անհրաժեշտությունը, որի դրդապատճառներից մեկը նաև անձի իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանությունն է: Քրեադատավարական գործող օրենսդրությունը, չնայած իր ժողովրդավարական բնույթին, ամբողջությամբ չի արտացոլում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական չափորոշիչները: Այդ մասին են վկայում ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից տասնյակից ավելի քրեադատավարական նորմերի հակասահմանադրական ճանաչումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վերաբերյալ Եվրոպական դատարանի կողմից կայացված որոշումները¹:

Քրեական դատավարության նոր օրենսգիրքի նախագիծը (այսուհետև՝ Նախագիծ), հիմք ընունելով ավանդական քրեադատավարական ինստիտուտները, միաժամանակ առանձնանում է նոր գաղափարախոսությամբ, որն արտացոլված է քրեական դատավարության բոլոր ինստիտուտներում: Այդ գաղափարախոսության հիմքում անկասկած ընկած են քրեական արդարադատության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական չափորոշիչները, որոնք որպես համամարդկային արժեքներ ընդունվում և պաշտպանվում են ժողովրդավարական երկրների կողմից: Այս հանգամանքն ինքնին ենթադրում է, որ նոր օրենսգիրքը պետք է բովանդակի բավարար նորարարություն՝ կապված դատավարության մասնակիցների իրավունքների և ազատությունների պաշտպանության հետ:

Քրեական դատավարության նոր օրենսգրքի հեղինակները, հիմնվելով քրեադատավարական ձևի և քրեական դատավարության սկզբունքների վրա, առավել մեծ ուշադրություն են դարձրել դատավարության սուբյեկտների դասակարգմանը, նրանց շրջանակին, իրավունքներին ու պարտականություններին, ինչպես նաև դրանց իրակա-

¹ Տե՛ս Հայեցակարգ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի, Երևան, 2011, էջ 4:

նացումն ապահովող երաշխիքներին:

Առաջին հերթին ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ դատավարության մասնակիցները դասակարգվում են՝ դատարան, վարույթի հանրային մասնակիցներ, վարույթի մասնավոր մասնակիցներ և վարույթին օժանդակող անձինք: Այդպիսի դասակարգման առանձնահատկությունն այն է, որ քրեական դատավարությունում առաջին անգամ են օգտագործվում «վարույթի հանրային մասնակիցներ» և «վարույթի մասնավոր մասնակիցներ» հասկացությունները, որոնք ավելի համահունչ են քրեական դատավարության էությանը: Այն բխում է նաև մրցակցության սկզբունքից, որովհետև երկու կողմերն էլ ներկայանում են որպես վարույթի մասնակիցներ. մի կողմը ներկայացնում է հանրային շահերը, իսկ մյուսը՝ մասնավոր:

ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում կասկածյալի՝ որպես դատավարության ինքնուրույն սուբյեկտի առկայությունը տեսության մեջ արժանացել է բազմաթիվ քննադատությունների: Շատերն այն համոզման են, որ «կասկածյալ» տերմինը համահունչ չէ անմեղության կանխավարկածի սկզբունքին, բացի դրանից՝ կասկածյալի առկայությունը անպայման ենթադրում է նրա նկատմամբ դատավարական հարկադրանքի միջոցների կիրառում, որն անկասկած արժանի է քննադատության: Քրեական դատավարության նոր օրենսգիրքը չէր կարող շրջանցել այս սուբյեկտի իրավական կարգավորման վերաբերյալ առկա հիմնախնդիրները: Իրականում միշտ չէ, որ քրեադատավարական հարաբերությունների ծագման պահին բավարար ապացույցներ են լինում անձին որպես մեղադրյալ անմիջապես ներգրավելու համար, բայց մինչ այդ քրեական դատավարությունում հայտնված անձը պաշտպանության իրավունք ունի և այն իրականացնում է որոշակի կարգավիճակ ձեռք բերելուց հետո:

Կասկածյալը որպես սուբյեկտ հանդես է գալիս քրեական դատավարության սկզբնական մասում, այսինքն՝ երբ դեռ քննություն չի իրականացվել, բայց կան բավարար ապացույցներ, որոնք վկայում են ենթադրյալ հանցագործության կատարմանը նրա մասնակցության մասին, և այդ հանգամանքների ուժով նրա նկատմամբ հնարավոր է կիրառել ձերբակալում: Ճիշտ է, Նախագիծը հրաժարվել է «կասկածյալ» հասկացությունից, բայց Նախագծի բազմաթիվ հոդվածներում հանդիպում ենք *«հիմնավոր կասկած» կամ «որոշամիտ կասկած»* հասկացությունների: Այսպես, Նախագծի 108-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ձերբակալում կարող է կիրառվել՝ հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած *հիմնավոր կասկածի* առկայության դեպքում:

«Հիմնավոր կասկած» հասկացությանը հանդիպում ենք նաև Եվրոպական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում, մասնավորապես՝ Եվրոպական դատարանը Ֆոքսը, Կենպեյլը և Խարտլին ընդդեմ Միացյալ Թագավորության գործով 30 օգոստոսի 1990 թվականի որոշմամբ պարզաբանում է, որ *«հիմնավոր կասկածի»* առկայությունը ենթադրում է այնպիսի փաստերի կամ տեղեկատվության առկայություն, որոնք ընդունակ են օբյեկտիվ դիտորդին համոզելու, որ անձը, որին վերաբերում է խոսքը, կարող էր կատարել իրավախախտումը²: Քրեական դատավարությունում կասկածի աստիճանը պայմանավորված է փաստերի ապացուցման մակարդակով, որը քրեական վարույթի տարբեր մասերում կարող է լինել տարբեր: Դրանով պայմանավորված՝ փոխվում է նաև ենթադրյալ հանցավոր արարքը կատարած անձի դատավարական վիճակը:

Հանցանք կատարած լինելու կասկածանքի նվազագույն աստիճանն անմիջակա-

² Fox, Campbell et Hartly, 40:

նորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով անձին ձերբակալելն է, որի համար չի պահանջվում ապացուցվածության այնպիսի աստիճան, ինչպիսին անհրաժեշտ է անձին մեղադրյալ ներգրավելու կամ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու համար³: Անձին մեղադրյալ ներգրավելու դեպքում նույնպես կասկած կա, բայց այն արդեն դրսևորվում է բավարար փաստերի առկայության մեջ: Անձը, որի վերաբերյալ կան կասկածներ ենթադրյալ հանցագործությունը կատարելու վերաբերյալ և դեռ չի ներգրավվել որպես մեղադրյալ, ըստ էության կասկածյալ է:

Իրականում ձերբակալված անձը ոչ այլ ինչ է, քան կասկածյալ, որովհետև նա կարող է ձերբակալվել միայն այն դեպքում, երբ կա նրա կողմից հանցագործություն կատարելու նսաին հիմնավոր կասկած: Անձը մինչև մեղադրյալ ներգրավվելը հանդես է գալիս ձերբակալվածի վիճակում: Ճիշտ է, Նախագծում ձերբակալված անձը վարույթի մասնավոր մասնակցների շարքում չի առանձնացվել, մասնավորապես Նախագծի 6-րդ հոդվածում չի դրված ձերբակալված անձի բնորոշումը, սակայն նրա իրավունքներն ու պարտականությունները սահմանված են ձերբակալման ինստիտուտին նվիրված հոդվածներում:

Ձերբակալումը շատ կարճ ժամանակահատվածում կասկածվող անձի ազատության սահմանափակումն է, որի նպատակն է մինչև մեղադրյալ ներգրավելը ապահովել նրա մասնակցությունը նախաքննությանը:

Նախագծից հետևում է, որ բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ ձերբակալվածն այն անձն է, որի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում: Վարույթի հետագա ընթացքում ձերբակալված անձը դառնում է մեղադրյալ, և այդ կարգավիճակը պահպանվում է մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Քանի որ նրա նկատմամբ պետք է սկսվի քրեական հետապնդում, հետևաբար նա ի սկզբանե օժտված է դատավարական լայն իրավունքներով: Ավելին, Նախագծում ուղղակի սահմանված է հետևյալը. անմիջականորեն ծագած կասկածանքի հիմքով ձերբակալված անձը ձերբակալման որոշումը ստանալու պահից, իսկ եթե օրենքով սահմանված ժամկետում այն չի հանձնվել, ապա իրեն ազատությունից փաստացի զրկելուց հետո՝ վեց ժամը լրանալու պահից, ձեռք է բերում սույն օրենսգրքով մեղադրյալի համար նախատեսված բոլոր վերաբերելի իրավունքներն ու պարտականությունները /Նախագծի հոդված 110, մաս 1/: Այդպիսի կարգավորումը մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ Նախագծում իրավունքների և ազատությունների պաշտպանության հետ կապված որևէ տարբերություն չի դրվում «կասկածյալ» և «մեղադրյալ» հասկացությունների միջև⁴:

³ Այդ մասին դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ Սահմանադրական դատարանն իր 2009 թվականի սեպտեմբերի 12-ի ՍԴՈ-827 որոշման մեջ՝ մասնավորապես ընդգծելով, որ հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի բավարար աստիճանը ձերբակալման դեպքում ավելի ցածր է, քան կալանավորման:

⁴ Այդպիսի իրավական կարգավորման կարելի է հանդիպել նաև եվրոպական որոշ երկրների քրեադատավարական օրենսդրությունում: Այսպես՝ Բ. Ա. Ֆիլոնոնովը նշում է, որ «մեղադրյալ» հասկացությունը ՉՖՀ քրեական դատավարության օրենսգրքում ձևական բնույթ ունի և չի արտացոլում նրա դատավարական վիճակը: Իր փաստական դատավարական վիճակով այդպիսի մեղադրյալը տիպիկ կասկածյալ է, և որպես այդպիսին նա հանդես է գալիս քրեական դատավարության ամբողջ ընթացքում (St´u Уголовный процесс западных государств //Учебное пособие под. Ред. Гученко К.Ф. М., Зерцало, М., 2001. էջ 423): Ֆրանսիայի քրեական դատավարության օրենսդրությունում չկա կասկածյալ հասկացությունը, բայց առանձին հոդվածներում օգտագործվում է «անձ, որը կասկածվում է հանցագործության մեջ», կամ «անձ, որի դեմ կան ապացույցներ» հասկացությունները (Ֆրանսիայի քր. դատ. օր-ի հոդված 63, մաս 2-րդ կամ հոդված 70):

Միջազգային փաստաթղթերում ձեռակալված անձի համար սահմանված են այն նվազագույն իրավունքները, որոնք պետք է տեղ գտնեն համապատասխան միջազգային փաստաթղթերը վավերացրած երկրների ներպետական օրենսդրության մեջ: Ելնելով միջազգային իրավական ակտերի վերլուծություններից՝ պետք է առանձնացնել հետևյալ չափորոշիչները. մասնավորապես՝ յուրաքանչյուր ձերբակալված անձ իրավունք ունի շատ կարճ ժամկետում իրազեկված լինելու իր նկատմամբ ունեցած կասկածանքի և դրա հիմքերի մասին, առարկելու այն ամենի դեմ, ինչ ներկայացվում է իր նկատմամբ, պահպանելու լռություն, տալու ցուցմունքներ այն լեզվով, որին տիրապետում է, ունենալու պաշտպան, իր ընտրած անձին տեղեկացնելու իր գտնվելու վայրի մասին, ստանալու տարբեր քննչական գործողությունների արձանագրությունների պատճենները, ենթարկվելու բժշկական զննման⁵:

Քրեադատավարական գործող օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ վերը թվարկված ոչ բոլոր իրավունքներն ու դրանց իրականացման երաշխիքներն են նախատեսված: Այսօր օրենսդրական այդ բացը բավականին խնդիրներ է առաջացնում պրակտիկայում: Ելնելով միջազգային փաստաթղթերի վերլուծությունից՝ Նախագծում առաջին անգամ կարգավորվել են ձերբակալված անձի նվազագույն իրավունքները, դրանց իրականացման պայմաններն ու երաշխիքները:

Նախագծի 110-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մինչև մեղադրյալի վերաբերելի իրավունքները ձեռք բերելը ձերբակալված անձն ունի հետևյալ նվազագույն իրավունքները՝

1) փաստացի ազատությունից զրկվելու պահին բանավոր, իսկ հետաքննության մարմնի կամ վարույթն իրականացնելու իրավասություն ունեցող մարմնի վարչական շենք մուտք գործելու պահին նաև գրավոր տեղեկացվել սույն հոդվածով նախատեսված նվազագույն իրավունքների և պարտականությունների մասին.

2) իմանալ իրեն ազատությունից զրկվելու պատճառը.

3) պահպանել լռություն.

4) իր ընտրած անձին տեղեկացնել իր գտնվելու վայրի մասին.

5) հրավիրել փաստաբան.

6) իր պահանջով ենթարկվել բժշկական զննման:

Նախագծում առաջին անգամ հանդիպում ենք այնպիսի իրավական կարգավորման, որը ձերբակալված անձի իրավունքների պաշտպանության ապահովման իրական երաշխիք է: Մինչդեռ քրեադատավարական գործող օրենսդրությամբ կասկածյալին նրա իրավունքներն ու պարտականությունները պարզաբանվում են ձերբակալման մասին արձանագրությունը կազմելուց հետո, իսկ մինչ այդ հնարավոր է, որ նրանից բացատրություններ վերցվեն, որոնք կարող են կրել նաև խոստովանական բնույթ: Նախագծում օրենսդրական այս բացը վերացված է, քանի որ այնտեղ հռչակված է, որ ձեր-

⁵ Քրեական դատավարությունում կասկածյալի կամ ձերբակալված անձի իրավական վիճակն իր ամրագրումն է ստացել միջազգային իրավական բազմաթիվ փաստաթղթերում, որոնց շարքում պետք է առանձնացնել ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (1948 թ.), ՄԱԿ-ի Քաղաքական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (1966 թ.), ՄԱԿ-ի Ձերբակալվածների հետ վարվեցողության նվազագույն չափորոշիչ կանոնները (1955 թ.), ՄԱԿ-ի Ձերբակալվածների հետ վարվեցողության հիմնական սկզբունքները (1990 թ.), ՄԱԿ-ի Ազատությունից զրկված անչափահաս անձանց պաշտպանության կանոնները (1990 թ.), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիան (1950 թ.):

բակալում իրականացնող իրավասու պաշտոնատար անձը պարտավոր է անձին արգելանքի վերացնելու պահին նրան տեղեկացնել երկու կարևոր իրավունքների մասին՝ ա) իմանալ իրեն ազատությունից զրկելու պատճառները, բ) պահպանել լռություն⁶:

1. **Պաշտպանության իավունքի իրականացումը ենթադրում է, որ ձերբակալում իրականացնող լիազոր մարմինը ձերբակալման պահին կամ դրանից անմիջապես հետո ձերբակալված անձին նրան հասկանալի լեզվով տեղեկացնում է ձերբակալման հիմքերը, նրա իրավունքները, ինչպես նաև դրանց իրականացումն ապահովող երաշխիքները:** Նախագիծը ձերբակալում իրականացնող մարմնին պարտավորեցնում է արգելանքի վերցնելու պահին անձին տեղեկացնել նրան ազատությունից զրկելու պատճառների մասին: Այս իրավունքի իրականացման նպատակն ակնհայտ է. յուրաքանչյուր անձ պետք է իմանա՝ ինչու են իրեն ձերբակալել: Ձերբակալված անձը պետք է տեղեկացված լինի հիմնավոր կասկածի մասին, որպեսզի կարողանա իրականացնել իր մյուս իրավունքները, մասնավորապես՝ դատարանում վիճարկել ձերբակալման օրինականությունն ու հիմնավորվածությունը: Այդ տեղեկություններն արգելանքի վերցնելու պահին ձերբակալված անձին հայտնում են բանավոր, սակայն ձերբակալում իրականացնող մարմինը դրանք կարող է ամբողջությամբ չհայտնել⁷:

2. **Կարևոր նշանակություն ունի ձերբակալված անձին լռելու իրավունքի մասին տեղեկացնելը⁸:** Այս իրավունքը՝ որպես կարևոր արժեք, իր ամրագրում է ստացել ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 1-ին մասում, համաձայն որի՝ ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ: Այս իրավունքի էությունն այն է, որ չի կարելի անձին հարկադրել ցուցմունք տալ իր դեմ, քանի որ ցանկացած հայտարարություն, որն արվում է նրա կողմից, կարող է օգտագործվել իր դեմ: Հարցաքննությունից առաջ ձերբակալվածը տեղեկացվում է նաև այն մասին, որ նա կարող է ցուցմունք տալ պաշտպանի մասնակցությամբ: Եթե ձերբակալվածը ցանկություն է հայտնել պաշտպան ունենալու, ապա պետք է ապահովվել վերջինիս մասնակցությունը ձերբակալվածի հարցաքննությանը: Այս իրավունքի իրականացման համար կարևոր երաշխիք է Նախագծի 336-րդ հոդվածի 3-րդ մասում տեղ գտած հետևյալ կարգավորումը. մինչդատական վարույթում դեպոնացման ընթացակարգից դուրս մեղադրյալի

⁶ Պետք է նշել, որ այսօր Նախագծում ամբողջովին ամրագրված՝ ձերբակալվածի վերը նշված իրավունքների իրականացումն ապահովվում է ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի Գագիկ Միքայելյանի վերաբերյալ կայացված որոշմամբ, որում մասնավորապես սահմանված է. բերվածի կարգավիճակի առանձնահատկությունները հաշվի առնելով (նախնական և կարճաժամկետ բնույթը)՝ բերվածը պետք է օժտված լինի առնվազն հետևյալ իրավունքներով. ա) իմանալու իրեն արգելանքի վերցնելու պատճառը (բխում է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին նախադասությունից, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3(ա) ենթակետից), (բ) տեղեկացնելու իրեն բերման ենթարկելու մասին (բխում է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասությունից), (գ) հրավիրելու իր փաստաբանին (բխում է ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասից), (դ) լռելու (բխում է ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 1-ին մասից): Տե՛ս Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու, 2010 թ., 1-ին կիսամյակ, 2010 թ., հ. 2, Երևան, էջ 304:

⁷ (D 8098/77, DR 16, p. III, spec. p. 117), (Fox, Campbell et Hartly, 40; ինչպես նաև՝ Conka, 50):

⁸ Այս իրավունքը նախատեսված է «Միրանդայի կանոններում», որը մշակվել է ԱՄՆ Գերագույն դատարանի 1966 թ. որոշմամբ՝ Միրանդան ընդդեմ Արիզոնայի գործով: Այս որոշմամբ սահմանվեց իրավունքների այն շրջանակը, որոնց մասին պետք է տեղեկացնել ձերբակալվածին: Պետք է նշել, որ հետագայում այս իրավունքներն իրենց ամրագրումը ստացան նաև այլ երկրների քրեական դատավարության օրենսգրքերում:

տված ցուցմունքները չեն կարող հրապարակվել, եթե դրանք ստացվել են պաշտպանի բացակայությամբ, և մեղադրյալը դատարանում հրաժարվել է դրանցից:

Լռելու կամ ցուցմունք չտալու իրավունքը ենթադրում է, որ դա չի կարող օգտագործվել ձերբակալված անձի կամ մեղադրյալի դեմ: Իր դեմ ցուցմունք չտալու մեղադրյալի իրավունքը նրա ամենակարևոր իրավունքներից է:

Ֆունկեն ընդդեմ Ֆրանսիայի գործով Եվրոպական դատարանը դիրքորոշում է հայտնել այն մասին, որ քրեական գործերով արդարացի դատական քննության իրավունքը ներառում է «յուրաքանչյուր անձի, ում առաջադրվել է քրեական մեղադրանք, իրավունքը (...), պահպանել լռություն և չտալու իր մեղքը հաստատող ցուցմունքներ»:

Սաունդեսն ընդդեմ Միացյալ թագավորության գործով Եվրոպական դատարանը սահմանել է, որ «լռություն պահպանելու իրավունքը և դրա բաղկացուցիչ մասը՝ իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը, Կոնվենցիայի 6-րդ հոդվածում հստակ հիշատակված չեն, սակայն դրանք հանրաճանաչ միջազգային նորմեր են, որոնք ընկած են արդարացի դատական դատաքննության հասկացության հիմքում, որի մասին խոսվում է 6-րդ հոդվածում: Դրանց իմաստը իշխանությունների ոչ պատշաճ հարկադրանքից մեղադրյալին պաշտպանելն է, ինչն օգնում է խուսափել դատական սխալներից և հասնել 6-րդ հոդվածով նախատեսված նպատակներին:

Վարույթն իրականացնող մարմինը մեղադրյալի լռությունը չի կարող որևէ կերպ մեկնաբանել ի վնաս նրա: Այս կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանը Ա. Առաքելյանի վերաբերյալ գործով արտահայտել է հստակ դիրքորոշում. այն է՝ առաջին ատյանի դատարանը, Ա. Առաքելյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու հիմքում դնելով նաև նրա՝ լռություն պահպանելու իրավունքը, թույլ է տվել ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ, 20-րդ, 65-րդ, 135-րդ հոդվածների, ինչպես նաև Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի առաջին կետի պահանջների խախտում (Ա. Առաքելյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0580/06/09): Նույն գործով ՀՀ վճռաբեկ դատարանը նաև նշում է այն մասին, որ մեղադրյալի կողմից իր դատավարական իրավունքների իրականացումը ոչ մի դեպքում չի կարող մեկնաբանվել ի վնաս մեղադրյալի և հիմք հանդիսանալ ինչպես կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, այնպես էլ կալանավորման ժամկետը երկարացնելու համար⁹:

Մեղադրյալի համար խոստովանական ցուցմունք չտալը համարվում է պաշտպանության իրականացման միջոց, բայց եթե նա որոշել է տալ ցուցմունք, ապա պետք է տեղեկացնի, որ իր ցուցմունքները կլինեն ճիշտ: Ըստ Նախագծի՝ ինչպես մեղադրյալը, այնպես էլ ձերբակալված անձը նախազգուշացվում են սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվության մասին:

3. Ձերբակալված անձն իրավունք ունի իր գտնվելու վայրի մասին տեղեկացնել համապատասխան անձանց, բայց միաժամանակ ելնելով արդարադատության շահերից՝ այդ իավունքի իրականացումը կարող է որոշակի ժամկետում սահմանափակվել: Այս իրավունքը բխում է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդված 2-րդ մասից, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3(ա) ենթակետից, որոնցում սահմանված է՝ ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրավուն ունի այդ մասին անհապաղ տեղեկացնելու իր կողմից ընտր-

⁹ Ա. Առաքելյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում, ԵԿԴ/0580/06/09: Տե՛ս Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու, 2010 թ., 2-րդ կիսամյակ, 2011 թ., հ. 3, Երևան, էջ 41:

ված անձին: Ակնհայտ է, որ ձերբակալվածի կողմից համապատասխան անձանց իր գտնվելու վայրի մասին տեղեկացնելն ունի բարոյական և մարդասիրական նշանակություն և բացառում է այնպիսի իրավիճակ, որ ենթադրյալ հանցագործության մեջ ձերբակալված անձին չհամարեն անհետ կորած:

Վարույթն իրականացնող մարմինը ձերբակալվածի համար այս իրավունքի իրականացումը պետք է ապահովի վարույթն իրականացնող մարմին բերելու պահից, սակայն արդարադատության շահերից ելնելով՝ նշված նվազագույն իրավունքի իրականացումը կարող է հետաձգվել առավելագույնը *վեց ժամով*, եթե առկա են հիմնավոր պատճառներ, որ այդ իրավունքի անհապաղ իրականացումը կարող է խոչընդոտել հանցագործության կանխումը կամ խափանումը կամ հանգեցնել ապացույցների ոչնչացման կամ վնասման /Նախագծի 110 հոդված, մաս 6/: Օրենքը, մասնավոր և հանրային շահերի հարաբերակցությունից ելնելով, նախատեսում է նշված իրավունքի իրականացման որոշակի ժամկետով հետաձգում. սա նշանակում է, որ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է այդ ժամկետն անցնելուց հետո ձերբակալվածին հնարավորություն տալ իրացնելու իր այդ իրավունքը:

Նշված իրավունքի իրացման համար կարևոր երաշխիք է Նախագծի 110 հոդվածի 7-րդ մասում տեղ գտած այն դրույթը, որ այդ մասին անհապաղ գրավոր հայտնվում է ձերբակալվածին, ինչպես նաև կազմվում է առանձին արձանագրություն՝ դրանում շարադրելով այդ իրավունքի իրականացումը հետաձգելու պատճառները: Անչափահասների գործերով վարույթի առանձնահատկություններից ելնելով՝ Նախագծի 421-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անչափահասի ձերբակալման, կալանավորման կամ կալանքի ժամկետը երկարացնելու մասին նրա օրինական ներկայացուցիչը անհապաղ տեղեկացվում է: Անչափահասի ձերբակալման մասին անհապաղ տեղեկացումն արդարացված է, որովհետև անչափահասի բացակայությունը նրա մերձավոր ազգականների կամ հարազատների մեջ կարող է առաջացնել ծանր ապրումներ:

Անկախ տեղեկացման եղանակներից՝ բոլոր դեպքերում այն պետք է իրականացվի օրենքով նշված ժամկետներում: Ձերբակալվածի գտնվելու վայրի մասին այլ անձանց տեղեկացված լինելու փաստի մասին, կարծում ենք, պետք է նշվի ձերբակալման արձանագրության մեջ, իսկ եթե իրազեկում տեղի չի ունեցել, ապա նաև՝ դրա պատճառները:

4. Ձերբակալված յուրաքանչյուր ոք իրավունք ունի օգտվելու փաստաբանի ծառայությունից, այդ թվում՝ նաև անվճար, եթե չունի բավարար նյութական միջոցներ:

Նշված իրավունքի իրականացման համար կարևոր երաշխիք է Նախագծի 110-րդ հոդվածի 5-րդ մասում տեղ գտած հետևյալ դրույթը. «Հետաքննության մարմինը կամ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ձերբակալվածին հետաքննության մարմնի կամ վարույթն իրականացնելու իրավասություն ունեցող մարմնի վարչական շենք բերելուց հետո ձերբակալվածի համար ապահովել փաստաբան հրավիրելու համար հեռախոսազանգեր կատարելու հնարավորություն»:

Ձերբակալված անձի համար պաշտպան ունենալու իրավունքի իրացումը կարևոր է, որովհետև անձի իրավունքներն ավելի շատ խախտվում են վարույթի այս մասում: Պաշտպանի մասնակցությունը ձերբակալված անձի իրավունքների իրական իրականացման երաշխիք է: Վարույթն իրականացնող մարմինը չպետք է որևէ ձևով խոչընդո-

տի ձերբակալվածի հետ փաստաբանի անհապաղ և խորհրդապահական կարգով տեսակցությունը:

5. Նախագծում առաջին անգամ նախատեսվում է, որ ձերբակալված անձն իրավունք ունի բժշկական զննման ենթարկվել: Այդ իրավունքն այն երաշխիքներից է, որը հնարավորություն է տալիս բացառելու ձերբակալվածի նկատմամբ բռնության կիրառումը: Այսօր պրակտիկայում հանդիպում ենք բազմաթիվ դեպքերի, երբ կասկածյալները կամ մեղադրյալները հայտարարություններ են անում իրենց նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական բռնություն կիրառելու մասին: Իհարկե նման հայտարարությունները չեն կարող աննկատ մնալ, որովհետև կասկածի տակ է դրվում նրանց ցուցմունքների թույլատրելիությունը:

Բժշկական զննման ենթարկվելու իրավունքը ենթադրում է, որ ձերբակալված անձին պետք է հնարավորություն տալ շատ կարճ ժամանակահատվածում՝ վարույթն իրականացնող մարմին բերելուց անմիջապես հետո, անցնել համապատասխան բժշկական զննում: Կարծում ենք, որ հետագայում անհրաժեշտության դեպքում ձերբակալված անձին պետք է հնարավորություն տալ նաև անվճար բժշկական օգնություն ստանալու և բուժվելու: Կարծում ենք, որ այս իրավունքի իրականացումը միանվագ չպետք է լինի, այլ անհրաժեշտության դեպքում ձերբակալված անձը կամ նրա պաշտպանը կարող է պահանջել կրկնակի բուժզննում անցնել:

Ձերբակալված անձի բժշկական զննման փաստը, բժշկի անուն-ազգանունը, բժշկական զննման արդյունքները մտցվում են համապատասխան արձանագրության մեջ, որը ներկայացվում է ձերբակալված անձին ծանոթանալու:

Իհարկե ցանկացած տեղեկություն, որը ստացվում է ձերբակալվածից առանց նրա դատավարական իրավունքները պարզաբանելու չի կարելի համարել թույլատրելի:

Սրանք այն իրավունքներն են, որոնց մի մասին ձերբակալվածը տեղեկացվում է արգելանքի վերցնելու պահին, իսկ մյուս մասին՝ վարույթն իրականացնելու իրավասություն ունեցող մարմնի վարչական շենք մուտք գործելու պահից:

Ձերբակալվածը՝ որպես դատավարության սուբյեկտ, կրում է նաև *պարտականություններ*: Նախագծում առանձին թվարկված են այն պարտականությունները, որոնք ձերբակալվածը կրում է մինչև մեղադրյալի վերաբերելի պարտականությունները ձեռք բերելը: Ըստ Նախագծի 110-րդ հոդվածի 4-րդ մասի՝ մինչև մեղադրյալի վերաբերելի պարտականությունները ձեռք բերելը ձերբակալված անձն ունի հետևյալ պարտականությունները՝

1) ենթարկվել ձերբակալումն իրականացնող անձի, հետաքննության մարմնի և վարույթն իրականացնող մարմնի կարգադրություններին.

2) ենթարկվել անձնական խուզարկության.

3) ենթարկվել բժշկական զննման և մատնադրոշմման, ինչպես նաև լուսանկարվել և փորձաքննության համար հանձնել սույն օրենսգրքով նախատեսված նմուշներ:

Ձերբակալումն իրականացվում է իրավագոր մարմնի կամ պաշտոնատար անձի որոշմամբ: Ձերբակալված անձը և նրա փաստաբանը իրազեկվում են ձերբակալման որոշման և արձանագրության, ինչպես նաև ձերբակալման պատճառների մասին: Ձերբակալման արձանագրության մեջ նշվում է անձին փաստացի արգելանքի վերցնելու և նրան վարույթն իրականացնող մարմնին բերելու ժամը, ձերբակալում իրականացնող

պաշտոնատար անձի տվյալները, նրան պահելու ճշգրիտ տեղը:

Նախագծի կարևոր առանձնահատկություններից է, որ այնտեղ սահմանված են ձերբակալվածի ոչ միայն իրավունքները, այլև դրանց իրականացումն ապահովող երաշխիքները: Նախագծում առաջին անգամ ուղղակի սահմանվում է, որ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է կատարել գործողություններ, որոնք ուղղված են ձերբակալված անձի իրավունքների իրականացումն ապահովելուն: Մասնավորապես սահմանված է, որ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ձերբակալվածին հետաքննության մարմնի կամ վարույթն իրականացնելու իրավասություն ունեցող մարմնի վարչական շենք բերելուց հետո նրան տրամադրել իր նվազագույն իրավունքների և պարտականությունների ցանկը, ձերբակալվածի համար ապահովել իր գտնվելու վայրի մասին տեղեկացնելու և փաստաբան հրավիրելու համար հեռախոսազանգեր կատարելու հնարավորություն, ձերբակալվածի պահանջի դեպքում ապահովել նրա բժշկական զննումը, չխոչընդոտել փաստաբանի տեսակցությունը ձերբակալվածի հետ:

Վերը թվարկված երաշխիքները ապահովում են ձերբակալման օրինականությունը, որի տակ հասկանում ենք հետևյալը՝ ա) ձերբակալումն իրականացվի միայն օրենքով նախատեսված հիմքերի առկայությամբ, սահմանված կարգով և օրենքով սահմանված ժամկետներում, բ) անձը չենթարկվի բռնության, սպառնալիքների, տանջանքների և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, գ) ձերբակալվածը և նրա փաստաբանը իրավունք ունենան դատարանում վիճարկել ձերբակալման օրինականությունն ու հիմնավորվածությունը, դ) լիազոր մարմինն ապահովի դատարանի առջև կանգնելու անձի իրավունքի իրացումը, ե) կալանավորման հարցը քննարկելիս դատարանի կողմից ձերբակալման իրավաչափության ստուգումը:

THE GUARANTEES OF THE PROTECTION OF THE RIGHTS AND LAWFUL INTERESTS OF THE ARRESTED PERSONS BY THE DRAFT CODE OF CRIMINAL PROCEDURE

Samvel Dilbandyan

Professor, Department of Criminal Proceedings and Criminalistics YSU

The Draft Code of Criminal Procedure contains many new regulations aimed at protection of the rights and lawful interests of the persons during the criminal proceedings. The most important regulations relate to the protection of the rights of the arrested person, as the practice shows that violations of these rights are mostly occur during the arrest or further detention. The Draft provides new procedural status for the arrested person by assigning broader range of procedural rights and guarantees. It is important to mention that the purpose of all these amendments is to provide the arrested person with the minimum standards of protection guaranteed by international documents.

ГАРАНТИИ ОБЕСПЕЧЕНИЯ ЗАЩИТЫ ПРАВ И ЗАКОННЫХ ИНТЕРЕСОВ ЗАДЕРЖАННЫХ ЛИЦ ПО ПРОЕКТУ НОВОГО УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОГО КОДЕКСА РА

Самвел Дилбандян

Профессор кафедры уголовно-процессуального права и криминалистики ЕГУ

Проект нового уголовно-процессуального кодекса РА выделяется наличием многочисленных новых правовых регулирований, которые в первую очередь направлены на защиту прав и законных интересов лица в рамках уголовного процесса. В этой системе важна защита прав задержанного лица, потому что, как свидетельствует практика, права лица, подозреваемого в совершении предполагаемого преступления, в основном нарушаются во время задержания или нахождения под арестом. В Проекте задержанное лицо предстаёт в новом статусе, то есть значительно расширились его права и гарантии их исполнения. Была предпринята попытка подвести защиту прав задержанного лица до минимальных стандартов, закреплённых в международных договорах.

Բանալի բաներ – ձերբակալված, նախագիծ, դատավարական հարկադրանք, կասկած, իրավունք, իրավաչափ շահ, երաշխիք

Keywords: arrested, draft, measures of restraint, suspicion, rights, lawful interest, guarantees

Ключевые слова: задержанный, проект, процессуальное принуждения, подозрение, права, законный интерес, гарантии